

## ՀՀ ֆինանսների նախարարություն

### Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 32/7

9 դեկտեմբերի 2014 թ.

Քննարկվեց Ա/Ձ Եսթեր Բաթոյանի 14.11.2014 թ-ի գանգատը ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.11.2014 թ-ի թիվ 6102329 ակտի դեմ:

#### **Ա/Ձ Եսթեր Բաթոյանի գանգատում բերված փաստարկները.**

24.10.2014 թ-ին Կոտայքի ՏՀՏ հարկային տեսուչների կողմից իրականացվել են հսկիչ գնումներ Ա/Ձ Եսթեր Բաթոյանի տաղավարից և հայտնաբերել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտում:

Հսկիչ գնումը կատարելու ընթացքում կատարվել են որոշակի խախտումներ: Նույն անձը կատարել է հսկիչ գնում՝ անկողնային պարագաներ՝ 40.000 դրամի, որոշակի ժամանակ անց՝ 3500 դրամի: Նշված երկու դեպքում էլ հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնները չեն խախտվել: Այնուհետև կատարվել է 3-րդ հսկիչ գնումը: Մասնավորապես, նույն գնորդը մոտեցել է տաղավարին, ընտրել է 3000 դրամ արժեքով սրբիչ և գումարը զգելով սեղանին անմիջապես հեռացել է տաղավարից: Ա/Ձ Եսթեր Բաթոյանը չի հասցրել նրան սպասարկել, անգամ հրաժարվել է ապրանքի համար տոպրակ վերցնել: Ա/Ձ Եսթեր Բաթոյանը վերցրել է գումարը և մոտեցել է ՀԴՄ-ին, որպեսզի մուտքագրի գումարը, սակայն այդ պահին նրան է մոտեցել մի քաղաքացի, որը ներկայացել է որպես հարկային տեսուչ և պահանջել է 100 դրամ արժողության կտրոն տրամադրել:

Ա/Ձ Եսթեր Բաթոյանը պատասխանել է, որ պատրաստվում է մուտքագրել իր մոտից գնված ապրանքի արժեքը, սակայն տեսուչը նրան հորդորել է, որ իր կտրոնը տրամադրի, որից հետո միայն մուտքագրի գնված ապրանքի արժեքը: Ա/Ձ Եսթեր Բաթոյանը շփոթվել է և 100 դրամի փոխարեն մուտքագրել է 1000 դրամ, սակայն տեսուչը պահանջել է, որպեսզի տրամադրվի 100 դրամի կտրոն: Ա/Ձ Եսթեր Բաթոյանը կատարել է տեսուչի պահանջը: Դրանից անմիջապես հետո ներս են մտել մյուս հարկային տեսուչները և արձանագրել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջների խախտում:

Ա/Ձ Եսթեր Բաթոյանը չի համաձայնվել խախտման հետ պնդելով, որ խախտումը կատարվել է հարկային տեսուչի դրդմամբ, այն է՝ իրեն թույլ չի տրվել մուտքագրել գնված ապրանքի արժեքը՝ 3000 դրամը:

Վերոգրյալի վերաբերյալ բանավոր ներկայացվել է Կոտայքի ՏՀՏ-ում, սակայն տեսուչները պնդել են, որ այդ ամենը կատարվել է հսկիչ գնումը կատարելուց 3-4 րոպե հետո: Տեսուչները նշել են նաև, որ հսկիչ գնումը կատարելուց հետո քաղաքացին դուրս է եկել «Պալաս» առևտրի կետից, մոտեցել նրանց, այնուհետև ներս են մտել տեսուչները: Սակայն անվտանգության տեսախցիկներն ապացուցում են հակառակը, որ նրանք հսկիչ գնումից առաջ գտնվել են շենքում և իրենց գործողություններով խոչընդոտել են տնտեսավարող սուբյեկտի գործողություններին և թույլ են տվել պաշտոնական դիրքի չարաշահում, խախտելով Ստուգումների մասին ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի պահանջները:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Եսթեր Բաթոյանը խնդրում է անվավեր ճանաչել վերը նշված ստուգման ակտը:

**ՀՀ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.**

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ համաձայն Կոտայքի ՏՀՏ պետի 26.09.2014 թ-ի թիվ 6201910 հանձնարարագրի Ա/Ձ Եսթեր Բաթոյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների պահպանման ուսումնասիրություն (հսկիչ գնում): Արդյունքում, 24.10.2014 թ-ին կազմվել է հսկիչ գնումների արդյունքների վերաբերյալ թիվ 6201910 արձանագրությունը, որում մասնավորապես նշվել է.

Ֆիզիկական անձ Մարիաննա Գրիգորյանի կողմից 24.10.2014 թ-ին, ժամը 16:40-ին ք.Երևան, Նոր Նորքի 1-ին մ/շ, Գայի պող. 12-2 տաղ. 235 հասցեում գտնվող խանութից կատարվել է 3000 դրամի հսկիչ գնում (1 հատ սրբիչ): Վաճառող-գանձապահ Եսթեր Բաթոյանը գումարը չի մուտքագրել ՀԴՄ և համապատասխան գումարի ՀԴՄ կտրոն չի տրամադրել: Ուսումնասիրությունն իրականացնող անձանց կողմից ներկայացվել են ծառայողական վկայականները և ուսումնասիրության հանձնարարագիրը՝ ծանոթացման: Այնուհետև ժամը 16:44-ին ՀԴՄ-ից դուրս է բերվել Z հաշվետվություն, որում հասույթը կազմել է 44500 դրամ: Չմուտքագրված գումարը՝ 3000 դրամը, ժամը 16:46-ին մուտքագրվել է ՀԴՄ և նորից դուրս է բերվել Z հաշվետվություն՝ 3000 դրամ ընդհանուր հասույթով:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ Ա/Ձ Եսթեր Բաթոյանի կողմից խախտվել են ՀՀ կառավարության 26.08.2004 թ-ի թիվ 1325-Ն որոշմամբ հաստատված հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների 19-րդ կետի «բ» ենթակետի պահանջները, որն առաջացնում է պատասխանատվություն «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով:

Հաշվի առնելով վերոնշյալը Կոտայքի ՏՀՏ պետի կողմից 05.11.2014 թ-ին հրապարակվել է թիվ 6102329 հանձնարարագիրը, որի համաձայն Ա/Ձ Եսթեր Բաթոյանի մոտ իրականացվել է հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման ստուգում: Արդյունքում, 19.11.2014 թ-ին կազմվել է թիվ 6102329 ակտը (այսուհետ նաև Ակտ), որով կիրառվել է «Հսկիչ-դրամարկղային մեքենաների կիրառման մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված տուգանքը՝ գումարով 150.000 դրամ:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ եզրակացության, որ հսկիչ գնումն, որի արդյունքները հիմք են հանդիսացել Ակտը կազմելու համար, ըստ էության, կատարվել է ՀՀ օրենսդրության պահանջների խախտմամբ: Մասնավորապես, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ով սահմանված կարգի 2-րդ կետի համաձայն, հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

ՀՀ կառավարության 2003 թվականի նոյեմբերի 27-ի N 1561-Ն որոշմամբ հաստատվել է հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ապրանքների տնօրինման կարգը (այսուհետ նաև Կարգ):

Կարգի 6.1. կետի համաձայն՝ Հսկիչ գնման (գնումների) արդյունքում հսկիչ գնում իրականացրած հարկային մարմնի պաշտոնատար անձի կողմից հանձնարարագիրը

ներկայացվելուց և արձանագրությունը կազմվելուց հետո, բայց ոչ ուշ, քան սույն կարգի 6.2-րդ կետում նշված ժամկետները, տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողին են վերադարձվում հսկիչ գնմամբ (գնումներով) ձեռք բերված ապրանքը (ապրանքները), եթե չեն փոփոխվել դրա (դրանց) գնման պահին առկա ապրանքային հատկանիշները:

Կարգի 6.1. կետի ա) ենթակետի համաձայն՝ Վաճառված ապրանքի հետընդունման ակտն ստորագրում են հսկիչ գնում կատարած անձը (անձինք) և տնտեսավարող սուբյեկտի անունից ապրանքներ վաճառող և (կամ) դրամական հաշվարկ կատարող աշխատողը:

Քննարկվող դեպքում սույն գործում առկա է հսկիչ գնումների արդյունքում վաճառված ապրանքների հետընդունման 24.10.2014 թ-ի թիվ 6201910 ակտը, որը, սակայն, հսկիչ գնումն իրականացրած անձի՝ Մարիաննա Հովհաննիսյանի կողմից ստորագրված չէ: Ավելին, հետընդունման 24.10.2014 թ-ի թիվ 6201910 ակտում անգամ նշված չէ վերջինիս տվյալները (անունը, ազգանունը):

Բացի այդ, «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի Հավելված 2-ի 1.4. կետի համաձայն՝ Հսկիչ գնումն իրականացվում է հարկային մարմնի ղեկավարի կամ հարկային տեսչության պետի կողմից տրված գրավոր հանձնարարագրի հիման վրա, որտեղ նշվում են հսկիչ գնում կատարելու հիմքերը, նպատակը, տնտեսավարող սուբյեկտի տվյալները (անվանումը, գտնվելու վայրը), հսկիչ գնում իրականացնելու վայրը, ժամկետները և հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի պաշտոնատար անձի (անձանց) տվյալները (անունը, ազգանունը, պաշտոնը)՝ վավերացված հսկիչ գնում իրականացնող հարկային մարմնի կնիքով: Ընդ որում, հսկիչ գնումն այլ անձի միջոցով (անձի գրավոր համաձայնությամբ) իրականացնելու դեպքում հանձնարարագրում նշվում են նաև այդ անձի տվյալները (ֆիզիկական անձի դեպքում՝ անձնագրային տվյալները, իրավաբանական անձի դեպքում՝ հարկ վճարողի հաշվառման համարը, անվանումը, գտնվելու վայրը):

Քննարկվող դեպքում սույն գործում առկա չէ որևէ ապացույց հսկիչ գնումն իրականացրած անձի՝ Մարիաննա Հովհաննիսյանի գրավոր համաձայնությունը Ա/Ձ Եսթեր Բաթոյանի մոտ հսկիչ գնում կատարելու վերաբերյալ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 63-րդ հոդվածի դրույթներով Հանձնաժողովը գտնում է, որ Ա/Ձ Եսթեր Բաթոյանի գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

**ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝**

Չեղյալ համարել ՀՀ ՖՆ Կոտայքի ՏՀՏ 19.11.2014 թ-ի թիվ 6102329 ակտը:

**Հանձնաժողովի նախագահ՝**



**Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ**

